ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ ընդունվեց ԽՍՀՄ կառավարության որոշումը սփյուռքահայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան իրականացնելու մասին.**

1) 1946 թ. նոյեմբերի 21-ին
2) 1945 թ. դեկտեմբերի 17-ին
3) 1945 թ. նոյեմբերի 21-ին
4) 1946 թ. մարտի 16-ին

2 **Ե՞րբ է ստեղծվել Նոր Ջուղայի հայկական տպարանը.**

1) 1618 թ.
2) 1638 թ.
3) 1616 թ.
4) 1568 թ.

3 **Ե՞րբ են մոնղոլները գրավել Լոռե և Շամքոր քաղաքները.**

1) 1242 թ.
2) 1243 թ.
3) 1244 թ.
4) 1236 թ.

4 **Ե՞րբ է ՀՅԴ-ն պաշտոնապես խզել իր հարաբերությունները երիտթուրքերի հետ.**

1) 1912 թ. մայիսին
2) 1911 թ. մայիսին
3) 1908 թ. հուլիսին
4) 1912 թ. հոկտեմբերին

5 **Պետոս զորավարը ե՞րբ մտավ Հայաստան և զորքով շարժվեց դեպի Տիգրանակերտ.**

1) 61 թ.
2) 62 թ.
3) 64 թ.
4) 58 թ.

6 **Ե՞րբ է գրի առնվել հայերի ծագման մասին վրացական ավանդազրույցը.**

1) VII-VIII դարերում
2) IX-XI դարերում
3) XI-XIII դարերում
4) V-VI դարերում

7 **Արաբները ո՞ր թվականին լուծեցին Վարդանակերտի պարտության վրեժը.**

1) 705 թ.
2) 708 թ.
3) 725 թ.
4) 703 թ.

8 **Ադրբեջանի հեղկոմը «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու» հայտարարությամբ հանդես եկավ՝**

1) 1921 թ. դեկտեմբերի 30-ին
2) 1920 թ. դեկտեմբերի 30-ին
3) 1920 թ. նոյեմբերի 30-ին
4) 1921 թ. նոյեմբերի 30-ին

9 **Որտե՞ղ է կառուցվել Սամոսատ քաղաքը.**

1) Կապադովկիայում
2) Փոքր Հայքում
3) Կոմմագենեում
4) Ծոփքում

10 **Ո՞ր պատմիչն է 363 թ. կնքված հռոմեա-պարսկական պայմանագիրն անվանել «ամոթալի».**

1) Արիանոս
2) Ամմիանոս
3) Ապպիանոս
4) Բուզանդ

11 **Ո՞րն է ՀՀ-ի երկրորդ բարձր լեռնագագաթը.**

1) Թոնդուրեկ
2) Կապուտջուղ
3) Սիփան
4) Արագած

12 **Ո՞ր գավառը չէր մտնում ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմից հետո ձևավորված Կարսի մարզի մեջ.**

1) Կաղզվան
2) Կարս
3) Ալաշկերտ
4) Օլթի

13 **Ո՞ր գավառում էր Բագավանի տաճարը.**

1) Եկեղյաց
2) Արտազ
3) Բագրևանդ
4) Դարանաղի

14 **Ո՞վ էր գլխավորում 484 թ. Հայաստան ներխուժած պարսկական զորքերին.**

1) Հազարավուխտը
2) Նիխորը
3) Սուրենը
4) Ատրվշնասպը

15 **Որքա՞ն էր 1921-1936 թթ. Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվը.**

1) 42 հազար
2) 51 հազար
3) 90 հազար
4) 23 հազար

16 **Ո՞ւմ կողմից է արվել «առանց հապաղելու հաց տրամադրել Կարմիր բանակին» կոչը.**

1) Ժողկոմխորհի
2) Ռազմհեղկոմի
3) ՉԵԿԱ-ի
4) ՀԿ(բ)Կ կենտկոմի

17 **Ո՞ր դեպքի կապակցությամբ են պատմիչի հետևյալ խոսքերը.**

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

1) Արշակունյաց թագավորության անկման
2) Հայաստանում մարզպանության հաստատման
3) Արտաշեսյան թագավորության անկման
4) ավատատիրության հաստատման

18 **Ո՞ր փաստաթղթից են մեջբերված հետևյալ խոսքերը.**

«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

1) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»-ից
2) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից
3) Հայոց ազգային խորհրդի՝ Հայաստանի անկախության մասին կոչից
4) «Հաշտության և հողի մասին» հրովարտակից

19 **Թվարկվածներից ո՞րը Կիլիկիայի հայկական պետության կառավարման գլխավոր մարմնի՝ արքունիքի կառուցվածքային բաղադրատարրերից չէր.**

1) պետական խորհուրդ
2) արքունի խորհուրդ
3) բարձրագույն դատական ատյան
4) գործակալություններ

20 **Ի՞նչ էր կոչվում Հայաստանի արևմտյան մասի կառավարիչն Աքեմենյան տիրապետության օրոք.**

1) մարզպան
2) ստրատեգոս
3) հյուպարքոս
4) սատրապ

21 **Թվարկվածներից ո՞րն Արմֆանի ստեղծման պատճառ չէր.**

1) գիտական աշխատանքների համակարգման անհրաժեշտությունը
2) միասնական գիտական կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը
3) գիտատեխնիկական հեղափոխության ծավալումը
4) գիտահետազոտական հիմնարկների թվաքանակի աճը

22 **Ինչո՞ւ արգելվեց հայկական մեհենագրության կիրառումը.**

1) քանի որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո արգելվեց նախորդ կրոնը
2) քանի որ այն դժվար էր կիրառել
3) քանի որ հունարենն ու ասորերենը ավելի լայն տարածում գտան ժողովրդի շրջանում
4) քանի որ ստեղծվել էր հայոց այբուբենը

23 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ծումբի ճակատամարտը
բ. Տայքի միացումը Բյուզանդիային
գ. Անիի Սմբատաշեն պարիսպների կառուցումը
դ. Աշոտ III-ին թագադրելու հանդիսությունները
ե. Տայքի Դավիթ Կյուրապաղատի մահը
զ. Անիի Աշոտաշեն պարիսպների կառուցումը

1) դ, զ, գ, ա, ե, բ
2) զ, դ, գ, ա, բ, ե
3) դ, զ, գ, ե, ա, բ
4) դ, գ, զ, ա, բ, ե

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

ա. Հայհեղկոմի կողմից Հայաստանում պարենհարկ մտցնելը
բ. Անդրդաշնության (ԱԽՍՀԴՄ) ստեղծումը
գ. Վրաստանի խորհրդայնացումը
դ. Լեռնային Ղարաբաղի՝ ինքնավար մարզի կարգավիճակ ստանալը
ե. հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում
զ. Կարսի պայմանագրի կնքումը

1) զ
2) ե
3) դ
4) բ

25 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	*Փաստ*
1. Կարապետ Սիմոնյան	ա. հայկական 89-րդ դիվիզիայի հրամանատարը 1943 թ. փետրվարից
2. Սիմոն Զաքյան	բ. ԽՍՀՄ կրկնակի հերոս
3. Նելսոն Ստեփանյան	գ. Երկրորդ աշխարհամարտում առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
4. Գևորգ Վարդանյան	դ. հայկական 390-րդ դիվիզիայի հրամանատար
5. Նվեր Սաֆարյան	ե. Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
	զ. ԽՍՀՄ հերոս, լեգենդար հետախույզ

1) 1–ե, 2–դ, 3–զ, 4–բ, 5-ա
2) 1–գ, 2–դ, 3–բ, 4–զ, 5-ա
3) 1–ե, 2–գ, 3–դ, 4–ա, 5-բ
4) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ա, 5-բ

26 **Ռաբունիների անունները համապատասխանեցնել ուսումնագիտական կենտրոններին.**

1. Նարեկավանք
2. Անիի վարդապետարան
3. Նոր Գետիկ
4. Գլաձոր
5. Տաթև

ա. Հովհան Որոտնեցի
բ. Ներսես Լամբրոնացի
գ. Մխիթար Գոշ
դ. Անանիա Նարեկացի
ե. Եսայի Նչեցի
զ. Հովհաննես Իմաստասեր

1) 1–դ, 2–ե, 3–բ, 4–գ, 5-ա
2) 1–բ, 2–ե, 3–դ, 4–գ, 5-զ
3) 1–դ, 2–զ, 3–ա, 4–ե, 5-զ
4) 1–դ, 2–զ, 3–գ, 4–ե, 5-ա

27 **ՀՀ խորհրդարանական ընտրությունների համար «Միասնություն» դաշինքը կազմեցին.**

1) ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, Երկրապահ-կամավորականների միությունը
2) «Ժառանգություն»-ը, ՀԺԿ-ն, ԲՀԿ-ն
3) Երկրապահ-կամավորականների միությունը, ԲՀԿ-ն, «Ժառանգություն»-ը
4) ՀԺԿ-ն, ՀՀԿ-ն, Երկրապահ-կամավորականների միությունը

28 **Ե՞րբ է Հայաստանի առաջին հանրապետությունում հանդիսավորապես բացվել համալսարանը.**

1) 1920 թ. հունիսի 31-ին
2) 1921 թ. հունվարի 16-ին
3) 1920 թ. հունվարի 31-ին
4) 1919 թ. մայիսի 16-ին

29 **Ե՞րբ է թուրքական 10-հազարանոց բանակը չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ արշավել Զեյթունի վրա.**

1) 1862 թ.
2) 1864 թ.
3) 1863 թ.
4) 1860 թ.

30 **Թվարկված մտավորականներից ո՞վ չի հանդիսացել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի օրերին ռուսական արքունիք ներկայացված Հայաստանի ազատագրության նախագծի հեղինակ.**

1) Կարապետ Արղությանը
2) Հովսեփ Արղությանը
3) Ալեքսանդր Խուդաբաշյանը
4) Խաչատուր Լազարյանը

31 **Ո՞րն էր մինչև նոր սահմանադրության ընդունումը պետության իրավական կարգավիճակը որոշող հիմնական փաստաթուղթը Հայաստանում 1990-ական թթ. սկզբին.**

1) «Ղարաբաղ» կոմիտեի ծրագիրը
2) Անկախության հռչակագիրը
3) ՀՀՇ-ի ծրագիրը
4) ՀԽՍՀ սահմանադրությունը

32 **Ո՞ւմ գահակալման հետ կապված է հռոմեական պատմիչը նշել, թե «…Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր են պատճառել հայերը»:**

1) Տիգրան IV-ի
2) Արտավազդ III-ի
3) Արտաշես II-ի
4) Տիգրան II-ի

33 **Ո՞ր աշխատությունում են զետեղված հետևյալ խոսքերը.**

«Խիզախությա՛մբ եղեք, եղե՛ք նմանվողներ մեր նախահոր՝ քաջ Արամի որդիներին, որ միգուցե թե այդպիսով կարողանանք վերազտնել մեր հայրենիքն Արարատյան»:

1) «Նոր տետրակ»-ում
2) Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ում
3) «Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» գործում
4) «Որոգայթ փառաց»-ում

34 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ իրավապաշտպանին.**

ա. պայքարում էր բնության և շրջակա միջավայրի պաշտպանության համար
բ. անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները
գ. խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ սահմանադրությունը
դ. խորհրդային իշխանության դեմ զինված պայքար էր մղում
ե. պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար

1) ա, դ
2) գ, ե
3) գ, դ
4) բ, ե

35 **Թվարկվածներից ո՞րը 571-572 թթ. հակապարսկական ապստամբության պատճառներից չէ.**

1) պարսից արքայի կողմից սեպուհներին հողեր ժառանգելու իրավունքի շնորհումը
2) վարչական ու կրոնական ճնշումների ուժեղացումը
3) հայ բնակչության հարստահարության շարունակումը
4) հարկերի ու տուրքերի ծանրացումը

36 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Արդինի-Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում
բ. «Նաիրի» մեկ միասնական պետական կազմավորման հիշատակումը
գ. Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
դ. Արամ Ուրարտացու դիմակայելն ասորեստանյան արշավանքներին

1) բ, դ, գ, ա
2) դ, բ, գ, ա
3) բ, գ, դ, ա
4) դ, բ, ա, գ

37 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Եղվարդի ճակատամարտը
բ. Էջմիածնի գաղտնի ժողովի գումարումը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ
գ. Բաղիշեցի վաճառական մահտեսի Շահմուրատի ժամանումը Փարիզ բանակցությունները շարունակելու համար
դ. Օրու ժամանումը Սպահան
ե. Դավիթ բեկի մահը
զ. Էրզրումի թուրք-պարսկական պայմանագրի կնքումը

1) զ, ա, բ, ե, զ, դ
2) դ, բ, գ, ե, ա, զ
3) բ, գ, դ, ե, ա, զ
4) գ, բ, դ, ե, զ, ա

38 **Արտաշես I-ի՝ Մեծ Հայքին միացրած տարածքները համապատասխանեցնել ուղղությանը.**

1. արևելք	ա. Կարնո երկիր, Եկեղիք, Դերջան
2. հարավ	բ. Գուգարք
3. հյուսիս	գ. Ծոփք, Կոմմագենե
4. արևմուտք	դ. Փայտակարան, Կասպեից երկիր
	ե. Տմորիք

1) 1–ա, 2–ե, 3–բ, 4–դ
2) 1–զ, 2–բ, 3–ե, 4–դ
3) 1–դ, 2–ե, 3–բ, 4–ա
4) 1–դ, 2–բ, 3–ե, 4–զ

39 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Էջմիածնում հիմնված մշակութային-պատմական ինստիտուտը 1925 թ. վերափոխվելուց հետո կոչվեց Գիտության և արվեստի ինստիտուտ:
2) 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի օրակարգում դրված հարցը վերնագրված էր՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Գերագույն խորհրդի միջնորդությունը՝ երկրամասը Ադրբեջանական ԽՍՀ-ից հանելու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին»:
3) 1920-ական թթ. ստեղծված գյուղացիական միացյալ տնտեսությունների ձևերից էին սովխոզները, արտելները, կոմունաները:
4) Մինչև 1991 թ. նոյեմբերի կեսերը նոր ինքնիշխան պետությունների ղեկավարների քննարկած միութենական պայմանագրի նախագծի վերջնական տարբերակում նոր միությունը բնութագրվում էր որպես «համադաշնային ժողովրդական պետություն»:
5) 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսի նախաձեռնող կազմակերպությունը կոչվում էր Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդ:
6) 1987 թ. հունիսի 18-ին 1915 թ. հայերի ցեղասպանությունը դատապարտած մարմինը կոչվում էր Եվրոպական միություն:

40 **Գտնել սխալ պատասխանները:**

Ինչո՞ւ 1918 թ. հնարավոր չեղավ պաշտպանել մեր հայրենիքի արևմտյան մասը.

1) հայկական կանոնավոր զորամասերի համալրումը դեռ չէր ավարտվել, և նրանց զգալի մասն էլ թիկունքում էր
2) Անտանտի երկրների՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով
3) Խորհրդային Ռուսաստանի բրեստյան պարտվողական քաղաքականության պատճառով
4) Ռուսաստանը պարտավորվել էր հայկական տարածքները հանձնել Թուրքիային՝ վճարելիք ռազմատուգանքի փոխարեն
5) մենշևիկների և մուսավաթականների հակահայկական դաշինքի պատճառով

41 **Գտնել ճիշտ պնդումները.**

1) Ադանայում տեղի ունեցան բողոքի ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին հրաժարվել Սսի ժողովի որոշումները կենսագործելուց:
2) Եկեղեցիների միավորման հակառակորդների մի մասին ձերբակալում և աքսորում են Կահիրե, իսկ մյուսներին բանտարկում են:
3) Բուն Հայաստանում նույնպես հրաժարվեցին Սսի և Ադանայի ժողովների որոշումները կատարելուց:
4) Հայ հասարակության մեջ առաջացավ մի խմբավորում, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ. այն ստացավ հակաունիթորներ անվանումը:
5) Երբ Օշին թագավորը և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը փորձեցին իրագործել Սսի ժողովի որոշումները, հանդիպեցին հայ բնակչության համառ դիմադրությանը:

42 **Իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Վախթանգ Գորգասալի գահակալության սկիզբը
2) Գյուտ կաթողիկոսի գահակալության սկիզբը
3) Հովսեփ Վայոցձորցու և Ղևոնդ Երեցի նահատակությունը
4) Պերոզի հրամանով Գյուտ կաթողիկոսի մեկնումը Տիզբոն
5) Գյուտ կաթողիկոսի վերադարձը Տիզբոնից և հաստատվելը Վանանդում
6) Ուրացյալ Վազգեն Բդեշխի սպանությունը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին Թիֆլիսում հայ-վրացական համաձայնագրի ստորագրումը
2) պետական լեզվի մասին օրենքի ընդունումը ՀՀ խորհրդարանի կողմից
3) Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միավորումը և կենտրոնական ղեկավար մարմնի՝ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) ստեղծումը
4) Ալեքսանդր Խատիսյանի գլխավորած կառավարության հրաժարականը
5) հայ-վրացական պատերազմի ավարտը

44 **Տարեթվերը համապատասխանեցնել Մեծ եղեռնի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների հետ.**

ա. Օսմանյան տերության քաղաքացիների մուտքն ու ելքը կայսրությունից արգելող հատուկ օրենքի հրապարակումը
բ. Վանի ազատագրումը
գ. հայ զինծառայողներին հրամանատարական պաշտոններում նշանակելու արգելքը
դ. Թալեաթի, Էնվերի և Նազըմի կողմից ստորագրված հայերի ոչնչացման հրամանի ուղարկումը Օսմանյան կայսրության նահանգային իշխանություններին
ե. Ըստ վաղօրոք կազմված ցուցակների՝ ավելի քան 2300 մարդու կալանումը Կ. Պոլսում

1) 1915 թ. ապրիլի 5
2) 1915 թ. ապրիլի 7
3) 1915 թ. մայիսի 5
4) 1915 թ. ապրիլի 11 (նոր տոմարով՝ ապրիլի 24)
5) 1915 թ. փետրվարի 25
6) 1915 թ. ապրիլի 15

ա	
բ	
գ	
դ	
ե	

45 **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) Դվինի 554 թ. ժողովում ուղենշվեց Հայոց եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը:
2) Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցներից էր Աղվանից եկեղեցին, որի կաթողիկոսանիստ կենտրոնը XIV դարի վերջերից Գանձասարի վանքն էր:
3) Միայն XVI դ. առաջին կեսին են զեյթունցիները պարտավորվել օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:
4) Տիգրան Մեծի տերության տարածքը կազմված էր երեք կարգի հատվածներից՝ բուն հայկական հողեր, հպատակ թագավորություններ և տնտեսական ու մշակութային ազդեցության ոլորտում գտնվող երկրներ:
5) Մինչև VIII դարի կեսերը Սասանյանները տարածաշրջանում վարում էին ծավալապաշտական քաղաքականություն:
6) Պապի վարած անկախ քաղաքականության արդյունքում Հայաստանից վտարվեցին բյուզանդական զորքերը:

Բ մակարդակ

46 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. 1917 թ. մարտի 9-ին ժամանակավոր կառավարության կողմից Անդրկովկասում ստեղծած գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան սեյմ:
բ. Բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկոմիսարիատ:
գ. Լոնդոնում դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի միջև կնքված համաձայնագրով հիմնականում հայերից ստեղծված զորամիավորը կոչվում էր «Արևելյան լեգեոն» (Հայկական լեգեոն):
դ. Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսար Ավերյանովին հասցեագրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»:
ե. 1906 թ. օգոստոսին Էջմիածնում հայ հասարակական շրջանակների հրավիրած ժողովը հայտնի է պատգամավորական Կենտրոնական ժողով անունով:
զ. 1916 թ. մարտ-օգոստոս ամիսներին հայկական կամավորական ութ ջոկատներից վերակազմակերպված վեց կազմավորումները կոչվում էին հայկական հրաձգային գնդեր:

1) ա, գ, զ
2) բ, գ, ե
3) բ, դ, ե
4) ա, դ, զ

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Աստղիկը եղել է նաև ռազմի դիցուհի:
բ. Հայաստանի քրմապետը նաև համարվում էր Մեծ դատավոր:
գ. Հայաստանում Ք. ա. III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելլենիստական» անունով:
դ. Արամազդը երկրի և երկնքի արարիչ, մարդկանց բարօրություն, լիություն ու արիություն շնորհող աստվածն էր:
ե. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:
զ. Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեջ տարածված կրոնը միաստվածային էր:
է. Զրադաշտականությունն իր բնույթով դուալիստական կրոն է:

1) ա, գ, զ
2) բ, ե, զ
3) ա, գ, է
4) բ, դ, ե

48 **Հայաստանի իշխանությունները Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի10-ի համաձայնագրին կարևոր նշանակություն չէին տալիս, որովհետև՝**

ա. այն համարում էին ժամանակավոր:
բ. երկրի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը և Հայկական հարցի լուծումը կապում էին Սևրի պայմանագրի հետ:
գ. մտածում էին, որ իրենք ստեղծված իրավիճակում այլ ելք չունեն:
դ. նրանք հասկանում էին, որ Սևրի պայմանագիրը հնարավոր չէ իրագործել:
ե. համոզված էին, որ եվրոպական հզոր պետությունների ջանքերով կիրագործվի Սևրի պայմանագիրը:
զ. գերագնահատում էին Ռուսաստանի դերը տարածաշրջանային խնդիրներում:
է. ենթադրում էին, որ դրանով կխոչընդոտեն քեմալա-բոլշևիկյան համագործակցության ամրապնդմանը:

1) ա, բ, ե
2) բ, գ, է
3) դ, զ, է
4) ա, գ, ե

49 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

ա. Վարդանանց պատերազմի արդյունքը հայոց երկրի ներքին ինքնուրույնության պահպանումն էր:
բ. Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
գ. Հայ իշխանների միջև առաջացած տարաձայնություններին Սաջյան ամիրաների միջամտության առիթը Նախճավան քաղաքի համար վեճն էր:
դ. 1137 թ. Հովհաննես Կոմնենոս կայսեր՝ Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I-ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
ե. Անտիոքի իշխանի որդի Ֆիլիպին հայոց գահից զրկեցին նրա ոչ հայամետ քաղաքականության պատճառով:
զ. 1243 թ. Սիսի եկեղեցական ժողովի հետևանքը Քաղկեդոնի երկաբնակության դավանանքի ընդունումն էր:

1) ա, գ, դ
2) բ, ե, զ
3) ա, բ, գ
4) բ, դ, զ

50 **Տիգրան Մեծի նվաճումներից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Մարաստանի գրավումը
բ. Կապադովկիայի գրավումը
գ. Վիրքի և Աղվանքի հպատակեցումը
դ. Օսրոյենեի, Ադիաբենեի և Միգդոնիայի միացումը Հայոց թագավորությանը
ե. Հրեաստանի և Նաբաթեա թագավորության կողմից Տիգրանի գերիշխանության ընդունումը
զ. Պտղոմայիս քաղաքի գրավումը
է. Ծոփքի միացումը Մեծ Հայքին
ը. Ասորիքի գրավումը
թ. Կորդուքի միացումը Մեծ Հայքին
ժ. պարթևների թագավորանիստ Էկբատանի գրավումը

1) դ
2) ը
3) ժ
4) ա

51 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Աբգար Թոխաթեցու գլխավորած պատվիրակության մեկնումը Վենետիկ
բ. Նոր Ջուղա բնակավայրի հիմնումը
գ. Չալդրանի ճակատամարտը
դ. Օսմանյան պետության հիմնադրումը Փոքր Ասիայում
ե. եկեղեցական ժողովի գումարումը Սեբաստիայում
զ. շահ Աբասի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթը
է. Սմբատ Արծրունու օծումը հայոց թագավոր
ը. կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում
թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության հրավիրումը Ստեփանոս Սալմաստեցու կողմից
ժ. օսմանների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը

1) դ, ը, ժ, է, թ, գ, ա, ե, զ, բ
2) ը, ժ, դ, է, գ, թ, ե, զ, ա, բ
3) դ, ը, ժ, է, գ, թ, ե, ա, զ, բ
4) ը, ժ, դ, գ, թ, է, ե, ա, բ, զ

52 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը
բ. «Հայրենասերների միություն» կազմակերպության հիմնադրումը
գ. «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի հիմնադրումը
դ. Արմենական կուսակցության հիմնադրումը
ե. «Վերակազմյալ հնչակյաններ» անունով Ա. Արփիարյանի թևի հանդես գալը
զ. Համիդիե գնդերի ստեղծումը
է. «Ազգային սահմանադրության» վավերացումը սուլթանական իշխանության կողմից
ը. «Արևելյան թատրոնի» կազմավորումը Կ. Պոլսում
թ. «Հայաստան» անվան գործածության արգելումը Աբդուլ Համիդ II-ի կողմից
ժ. «Բարենպատակ ընկերություն» խմբակի հիմնադրումը

1) է, ը, ժ, գ, ա, թ, բ, դ, ե, զ
2) ը, է, ժ, գ, ա, թ, դ, բ, զ, ե
3) է, ժ, ը, թ, գ, բ, ա, դ, ե, զ
4) ը, է, ժ, գ, թ, բ, ա, դ, զ, ե

53 **Կատարել համապատասխանեցում.**

1. Զակոմո (Հակոբ) Չամչյան
2. Հովհաննես Ադամյան
3. Լևոն Օրբելի
4. Նիկողայոս Մառ
5. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան
6. Նիկողայոս Ադոնց

ա. «Անի» աշխատության հեղինակը
բ. «Ազգապատում» աշխատության հեղինակը
գ. ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրը
դ. ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հիմնադիրը
ե. էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրը
զ. հեռավորության վրա գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձը
է. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության հեղինակը

1) 1–ե, 2–զ, 3–դ, 4–գ, 5–ա, 6–բ
2) 1–զ, 2–դ, 3–ե, 4–գ, 5–բ, 6–է
3) 1–դ, 2–զ, 3–ե, 4–գ, 5–ա, 6–բ
4) 1–դ, 2–զ, 3–ե, 4–ա, 5–բ, 6–է

54 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Սուրբ գրքի հայերեն թարգմանությունն անվանվել է Աստվածաշունչ:
բ. Հայրենիք վերադարձող Մեսրոպ Մաշտոցին Արաքսի ափին մեծ հանդիսավորությամբ դիմավորել են Վռամշապուհ արքան, Սահակ Պարթև կաթողիկոսը, նախարարագունդ ավագանին՝ ժողովրդի բազմության հետ:
գ. Մեսրոպ Մաշտոցը՝ հայ դպրության հիմնադիրը, գրել է հոգևոր ճառեր, երգեր, հատկապես շարականներ:
դ. Մեսրոպ Մաշտոցը տառեր է ստեղծել նաև վրաց և Արաքսի ձախափնյա բուն Աղվանքի ցեղերից մագքութների համար:
ե. Սահակ Պարթևի նամակով Մաշտոցը ներկայանում է բյուզանդական Թեոդոսիոս III-ին, ստանում է նրա համաձայնությունը Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու համար:
զ. Հայկական դպրոցներ բացելու առաքելությունը երկրի արևմտյան մասում Մաշտոցն իրականացնում է 415-419 թթ.:
է. Առաջին բարձրագույն դպրոցը՝ վարդապետարանը, հիմնադրվել է Վաղարշապատում:

1) դ, զ, է
2) դ, ե, զ
3) գ, դ, ե
4) ա, բ, է

55 **Բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

ա. 1992 թ. դեկտեմբերին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:
բ. 1993 թ. մայիսի 18-ին հայ ազատամարտիկները մտան Լաչին:
գ. 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը:
դ. 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները:
ե. 1992 թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը:
զ. 1920-ական թվականների սկզբին ամենամարդաշատ հայկական գաղթօջախը Շվեդիայում էր:
է. 1949 թ. օգոստոսին ՀՍԽՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը:
ը. 2015 թ. հունվարից ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի (ԵԽ) լիիրավ անդամ է:

1) գ, դ, ե, է
2) բ, դ, ե, է
3) ա, բ, զ, ը
4) բ, գ, զ, ը

56 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից որո՞նք են ճիշտ.**

ա. Արցախից Ռուսաստան Հովսեփ Էմինի հեռանալու պատճառը Սիմեոն Երևանցու և տեղի ուժերի կողմից նրան չօժանդակելն էր:
բ. Զեյթունի 1862 թ. ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխզիջման գնալու պատճառը Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքն էր:
գ. Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու գլխավոր պատճառը թուրք-ռուսական դարավոր հակամարտությունն էր:
դ. 1914 թ. կնքված ռուս-թուրքական համաձայնագրի չիրագործվելու պատճառներից էր Բալկանյան առաջին պատերազմը:
ե. Անգլիայի և Ֆրանսիայի կողմից 1915 թ. Դարդանելի գործողությունը ձեռնարկելու պատճառը Կիլիկիայի և արաբական տարածքների գերմանական զորքերի ռազմակալման կասեցումն էր:
զ. Առաջին աշխարհամարտի ժամանակ ցարիզմի կողմից հայ կամավորական ջոկատների ցրման գլխավոր պատճառը հայերի անկախական ձգտումներն էին:
է. Հայ ժողովրդի նկատմամբ Նադիր շահի ցուցաբերած դրական վերաբերմունքի պատճառներից էր հակառուսական պայքարում հայ բնակչության օժանդակությունը ստանալը:

1) ա, դ, զ
2) բ, դ, ե
3) ա, գ, զ
4) բ, գ, է

57 **Վանի թագավորության արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

1) Նրա օրոք տերության կառավարման ոլորտում համադաշնային կառավարման համակարգից սկսվեց անցում կատարվել կենտրոնացված պետության:
2) Նրան հաջողվեց բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ:
3) Նրա առաջնորդությամբ ստեղծվեց Վանի աշխարհակալությունը:
4) Նա է անցկացրել գրային բարեփոխումը Վանի թագավորությունում:
5) Նա կառուցեց 72 կմ երկարությամբ ջրանցք, որն օգտագործվում է մինչև օրս:
6) Նա Սևանա լճի ավազանում վերակառուցեց ամրոցներ և դրանք վերանվանեց Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով:

ա. Մենուա
բ. Իշպուինի
գ. Սարդուրի II
դ. Սարդուրի I
ե. Ռուսա I
զ. Արգիշտի I
է. Ռուսա II

1) 1–գ, 2–է, 3–ա, 4–ե, 5–դ, 6–բ
2) 1–բ, 2–գ, 3–զ, 4–դ, 5–ա, 6–ե
3) 1–գ, 2–զ, 3–է, 4–ա, 5–բ, 6–ե
4) 1–գ, 2–է, 3-զ, 4–բ, 5–ա, 6–ե

58 **Ընտրել սխալ պնդումները.**

ա. Օգտվելով Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ի՝ Մակեդոնացուց կրած պարտություններից՝ հայերը դեռևս Գավգամելայի ճակատամարտից առաջ հռչակում են Մեծ և Փոքր Հայքերի անկախությունը:

բ. Պոմպեոսի կողմից Պոնտոսը ռազմակալվելուց հետո Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Ք. ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին:

գ. Գահակալության վերջին շրջանում Տիգրան III-ը ձերբազատվեց Հռոմի միջամտություններից և, մերձենալով Պարթևստանին, սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն:

դ. Օգտագործելով պատեհ առիթը՝ պարթևական զինված ուժերը՝ թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ, և նրան օժանդակող հայկական զորամասերը՝ Վասակ զորավարի գլխավորությամբ, հռոմեացիներին դուրս մղեցին Կիլիկիայից, Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից:

ե. Հրահատ IV-ը հիանալի գիտակցում էր, որ Հայաստանից հետո Պարթևստանն է լինելու Հռոմի հաջորդ թիրախը, ուստի փոխեց իր վերաբերմունքը և ռազմական զգալի օգնություն տրամադրեց Հայաստանին:

զ. Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը զերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:

է. Խայտառակ ձևով պարտված Պետոսը սուտ լուր է ուղարկում Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ պարտված հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:

ը. Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ I թագավորը հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:

1) ա, ե, ը
2) դ, ե, է
3) ա, զ, ը
4) բ, գ, զ

59 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. 1918 թ. հունվարին թուրքական զորքերը ներխուժել էին Արևելյան Հայաստան և Անդրկովկաս:
բ. Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Լոսովի խորհրդով Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Հ. Օհանջանյանն ու Ա. Զուրաբյանը մեկնեցին Բեռլին:
գ. 1918 թ. մայիսի 27-ին հայտարարվեց Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության անկախության մասին:
դ. 1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի մամուլում Ավետիս Ահարոնյանի ձևակերպումով հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի կոչը:
ե. Բաթումում 1918 թ. մայիսի 11-ին վերսկսված բանակցություններում թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Ք. Կարաբեքիր փաշան:
զ. Բաթումի հաշտության բանակցություններում հայ պատվիրակները տեղեկացրին, որ իրենք հանդես են գալիս Հայոց ազգային խորհրդի անունից:
է. Բաթումի պայմանագրով քեմալական կառավարությունն ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը:
ը. Նորահռչակ հայկական առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր իշխանությունը կոչվեց Հայաստանի կառավարություն:

1) բ, գ, է
2) բ, գ, զ
3) դ, ե, զ
4) ա, դ, ը

60 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Տաշիր-Զորագետի թագավորության հիմնադիր Գուրգենը փախավ երկրից՝ զրկվելով իր հողային տարածքներից, որի համար էլ ստացավ «Անհողին» մականունը:
2) Դվին, ապա Պարտավ կենտրոնով արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորը կոչվեց Արմինիա ամիրայություն:
3) Իշխան Դավիթ Սահառունուն Հերակլ կայսեր շնորհած աստիճանը կոչվում էր պատրիկ-կյուրապաղատ:
4) Բագրատունյաց Հայաստանում գործակալությունների մեջ կարևոր էին ինքնակալ միապետի, իշխանաց իշխանի և սպարապետի պաշտոնները:
5) Միջնաբերդի շուրջը տարածվող բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
6) Բագրատունիների օրոք բանակը բաղկացած էր արքունական և նախարարական գնդերից:
7) Ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականների պալատները կառուցված էին շահաստան կոչվող թաղամասում, որտեղ կենտրոնացված էին նաև հարուստ վաճառականների շենքերը, շուկաները, հյուրանոցները և այլն:
8) Թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված գունդը կոչվում էր արքունական:

61 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Սելջուկների տիրապետության հաստատման հետևանքով Հայաստանի տարածքում ստեղծվեցին Երզնկայի, Տևրիկի, Կեսարիայի և Ադանայի սելջուկյան իշխանությունները:
2) Հայ-վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:
3) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը զարգացած ավատատիրության շրջանում գոյություն ունեցող ավատատիրական մասնատվածությունն ու իշխանների կենտրոնախույս ձգտումներն էին:
4) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
5) Նախարարների հետ Տիրանի ունեցած բարդ հարաբերությունների հետևանքով կորուստներ կրեցին Արծրունյաց և Բզնունյաց նախարարական տոհմերը:
6) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և ամփոփվում էր Միջնաշխարհում գտնվող ոստանում:
7) Ավատատիրության խորացմամբ ծառայող ազնվականության հողատարածքները մասնատվում էին, ինչի հետևանքով մեծանում էին թագավորական, պետական հողերը:

62 **Թվարկվածներից որո՞նք 298 թ. Մծբինի պայմանագրի հետևանքներ չեն.**

1) Արշակունիներն ամրապնդվեցին հայոց գահին:
2) Ընդունվեց Միլանի հրովարտակը:
3) Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը:
4) Պարսից թագավոր Վաղարշ I-ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
5) Տրդատ III-ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
6) Վերականգնվեց Հայոց աշխարհի ամբողջականությունը:
7) Տրդատ III-ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:

63 **Ընտրել սխալ փաստարկները.**

1) 1918 թ. ապրիլի 11-ից հունիսի 4-ը Անդրկովկասի իշխանությունները Բաթումում հաշտության բանակցություններ են վարել թուրքերի հետ:
2) 1918 թ. մարտի 1-ից ապրիլի 1-ը Տրապիզոնում Անդրկովկասյան Սեյմի և Թուրքիայի միջև ընթացել են բանակցություններ:
3) 1917 թ. մայիսի 2-11-ը կայացել է արևմտահայերի երկրորդ համագումարը Երևանում:
4) 1826 թ. սեպտեմբերի սկզբներին հայազգի գեներալ Վալերիան Մադաթովի զորագունդը հետ է գրավում Գանձակը:
5) 1827 թ. Գալուստ Շերմազանյանը թատերական շենքի վերածած իր երկհարկանի տանը բեմադրել է հայ և օտար դրամատուրգների պիեսներ:
6) 1829 թ. հունիսի 24-ին Ի. Պասկևիչի գլխավորած ռուսական հիմնական ուժերը գրավում են Հասան կալան:
7) 1891 թ. սկզբին կնքված համաձայնագրով Հնչակյան կուսակցությունը միացել է ՀՅԴ-ին:
8) 1918 թ. ապրիլի 6-8-ը Ալեքսանդրապոլում տեղի է ունեցել հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն:

64 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) Կապիտան Արսեն Շահմազյանը 1919 թ. նոյեմբերին ժամանեց Գորիս և ստանձնեց Արցախի գեներալ-կոմիսարի պաշտոնը:
2) Արսեն Շահմազյանին գեներալ-կոմիսարի պաշտոնում փոխարինեց Սերգեյ Մելիք-Յոլչյանը:
3) Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանության գործում մեծ դեր ունեցան գեներալ Նազարբեկյանը, Դրոն, Համազասպը, Գրիգորի Կորգանովը և ուրիշներ:
4) Այնթապի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր հոգևոր առաջնորդ Պետրոս Սարաճյանը:
5) Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում ամրապնդվեցին Անգլիայի դիրքերը:
6) Բաքվի 26 կոմիսարները 1918 թ. սեպտեմբերի 15-ին գնդակահարվեցին անդրկասպյան էսէռական իշխանությունների և անգլիացիների կողմից:
7) Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն»:
8) Կիլիկիայում 1920 թ. սկզբներին ապրում էր 300 հազար հայ, սակայն տեղում հաստատված ֆրանսիական վարչությունը լուրջ քայլեր չձեռնարկեց հայերի անվտանգությունն ապահովելու համար:
9) Մուդրոսի զինադադարից հետո Կիլիկիան զինագրավվեց ֆրանսիական զորքերի կողմից, իսկ 1919 թ. նոյեմբերին նրանց փոխարինեցին անգլիական զորքերը:

65 **Թվարկվածներից որո՞նք են խախտում 1918 թ. թուրք-հայկական պատերազմի դեպքերի տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) թուրքական զորքերի կողմից Սարիղամիշի գրավումը
2) Կարսի՝ առանց դիմադրության թուրքերին հանձնվելը
3) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից
4) Սասունցի Մանուկի և Մուշեղի գլխավորությամբ Ներքին Թալինի բերդի գրավումը
5) թուրքական զորքերի ներխուժումը Ջավախք հարավ-արևմուտքից
6) հայկական զորքերի կողմից Սարդարապատի հետգրավումը
7) Բաշ-Ապարանի ճակատում հայկական ուժերի վերջնական հաղթանակը
8) Ղարաքիլիսայի հերոսամարտի ավարտը
9) Շիրակում՝ Սոգյութլուի (Սառնաղբյուր) ճակատում, հայկական ուժերի հաղթական կռիվների ավարտը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը
2) բոլոր զինված ջոկատները ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր կոչելու մասին ԼՂՀ Գերագույն խորհրդի հատուկ որոշման ընդունումը
3) ՀՀ-ում վարչատարածքային նոր միավորների՝ 10 մարզերի ստեղծումը
4) «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
5) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
6) ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի վերացումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) «Հայոց մեծ թվականի» սահմանվելը
2) Խաչափայտի ազատագրումը և վերադարձը Երուսաղեմ
3) Արշակ Արշակունու մասնակցությունը բյուզանդական կայսեր դեմ կազմակերպված խռովությանը
4) Ներսեհ Կամսարականի ճանաչվելը հայոց իշխան բյուզանդական կայսեր կողմից
5) Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև «հավիտենական» կոչված հաշտության կնքումը
6) Կոմիտաս Մամիկոնյան ու Մաթեոս Ամատունի եպիսկոպոսների և Սմբատ Բագրատունու մասնակցությունը Տիզբոնի ժողովին

68 **Կատարել համապատասխանեցում.**

ա. նէպից հրաժարվելու և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականության անցումը
բ. գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը Հայաստանում
գ. Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
դ. ՀԿԵՄ-ի ստեղծումը
ե. Հայոց եկեղեցու կողմից Մեծ եղեռնի օրվա՝ ապրիլի 24-ի նշումն արգելող խորհրդային իշխանության հատուկ որոշման ընդունումը
զ. Աղասի Խանջյանի սպանությունը

1) 1926 թ.
2) 1929 թ.
3) 1921 թ.
4) 1923 թ.
5) 1924 թ.
6) 1936 թ.
7) 1930 թ.

ա	բ	գ	դ	ե	զ

69 **Պատմիչների անունները համապատասխանեցնել հայոց արքաների վերաբերյալ իրենց խոսքերին.**

ա. «Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմեացիների մեջ»:
բ. «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»:
գ. «Հռոմեացիները նրան ողջունեցին արքայավայել»:
դ. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:
ե. «Հայաստանն… աճել է Արտաշեսի ջանքերով…, և ուստի այստեղ բոլորը միալեզու են»:
զ. «Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ»:

1) Պլուտարքոս
2) Տակիտոս
3) Արիանոս
4) Մովսես Խորենացի
5) Ստրաբոն
6) Պոլիբիոս
7) Հերոդոտոս

ա	բ	գ	դ	ե	զ

70 **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում պատերազմը 1917 թ. գարնանը թուրք-անդրկովկասյանից վերաճել է թուրք-հայկականի:
2) Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածը հրապարակվել է համատարած կոլեկտիվացման գործընթացն սկսվելուց հետո:
3) ՀՀ նախկին վարչապետ Ա. Խատիսյանը Պոտսդամի կոնֆերանսի նախօրեին դիմել էր Ստալինին, Թրումանին, Չերչիլին և խնդրել լուծել հայ ժողովրդին հուզող՝ հայկական տարածքների վերադարձի հարցը:
4) Մադրասում 1836-1837 թթ. հրատարակվել է «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» մեծարժեք բառարանը:
5) 1880-ական թթ. կեսերից պահպանողական և ազատական հոսանքներն իրենց սպառում են:
6) Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասն առաջին անգամ «Թուրքահայաստան» է կոչվել Ժամանակավոր կառավարության որոշմամբ: